ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2023թ.

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ-Ի
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ԳՐԻՇԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@het

Հարգելի պարոն Բալասանյան.

Ի պատասխան Ձեր՝ 28.08.2023թ. գրությանը, տեղեկացնում եմ, որ ՀՀ Լոռու մարզում գործում են մարզային ենթակայության 149 դպրոցներ, որտեղ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում տարբեր պատճառներով, տարբեր առարկաներից առաջանում են ուսուցչի թափուր հաստիքներ: Համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարի 15.04.2013թ. թիվ 396-ն հրամանի՝ ուսուցչի թափուր հաստիքը համալրվում է մրցույթով: ՀՀ Լոռու մարզի ուսումնական հաստատություններում հայտարարված մրցույթների մասին տեղեկատվությանը Դուք կարող եք ծանոթանալ «Լոռու մարզ» շաբաթաթերթից, ինչպես նաև՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՀՀ Լոռու մազպետի աշխատակազմի կայք-էջերից՝ հետևյալ հղումներով՝ https://escs.am/am/news/8137, http://lori.mtad.am/dprocner/: Նշեմ, որ 2023թ. օգոստոսի 31-ի դրությամբ Լոռու մարզում հայտարարված է ուսուցչի թափուր տեղի թվով 379 մրցույթ:

Քանի որ դպրոցներում աշակերտների ընդունելությունը կատարվում է էլեկտրոնային համակարգի միջոցով, 2023-2024 ուսումնական տարում Լոռու մարզի 1-ին դասարան գնացող աշակերտների թվի մասին տեղեկատվությանը ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը չի տիրապետում. այն հասանելի կլինի միայն ս/թ սեպտեմբերի 15-ից հետո:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ աշակերտների թվի, ինչպես նաև դպրոցների վերաբերյալ ցանկացած տեղեկատվությանը դուք կարող եք ծանոթանալ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»-ի emis.am կայքից:

31/08/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա.Խաչատրյան

կատարող՝ ԿՄՍ վարչություն, կրթության բաժին
հեռ. /0322/ 4-0161